# Բռնություններ Ադրբեջանում

## *Լոնդոնյան «Թայմսը» արձագանքում է բարոնուհի Քերոլայն Քոկսի Արցախ կատարած առաքելությանը*

Բարոնուհի Քոկսի գլխավորությամբ միջազգային իրավագետների եւ մարդու իրավունքների ակտիվիստների խումբը երեկ Մոսկվայում, որտեղ նոր էր վերադարձել շրջանում կատարած քննական այցելությունից, ներկայացրեց Ադրբեջանում խորհրդային զորքերի կողմից կատարվող բռնությունների եւ իրավախախտումների սարսափելի պատկերը:

Ինը հոգուց բաղկացած պատվիրակությունն ընդառաջել էր հայկական այն դիմումներին, թե իրենց հազարավոր ազգակիցներին բռնագաղթի են ենթարկում Ադրբեջանի հայկական գյուղերից: Լորդերի պալատի փոխնախագահ լեդի Քոկսի եւ նրա գործընկերների համատեղ մի հայտարարության մեջ խոսվում է այն մասին, թե խորհրդային եւ ադրբեջանական ուժերի կողմից կալանքի տակ գտնվող պատանդները խոշտանգվում են, զրկված են մնում ջրից ու նորմալ սննդից, նրանց մերժվում է իրավաբանների եւ ազգականների հետ կապ հաստատելու իրավունքը:

Նրանք դատապարտեցին նաեւ հայ զինյալների կողմից Ադրբեջանի քաղաքացիների դեմ կիրառվող բռնությունները, սակայն հուսալորեն պաշտպանեցին հայկական պնդումներն այն մասին, թե Մոսկվայի կողմից ուղարկված զորքերը միացել են Ադրբեջանի հանրապետության ուժերին՝ ջարդեր կազմակերպելու գործում: Անդրկովկասի կոնֆլիկտային գոտում մարդու իրավունքների խախտումներն ուսումնասիրելու պարտականությունը խմբին վստահվել էր մայիսին, Մոսկվայում, Անդրեյ Սախարովի հիշատակին նվիրված միջազգային խորհրդաժողովի կողմից:

Լեդի Քոկսն ասաց, որ իր պատվիրակությունը Ադրբեջանի հայաբնակ շրջանում՝ Լեռնային Ղարաբաղում երեք տարի առաջ ծայր առած ազգամիջյան կռիվների սկսելուց հետո այնտեղ այցելող միջազգային առաջին խումբն էր: Նա եւ պատվիրակության ուրիշ անդամներ ասացին, թե իրենք կոպիտ վերաբերմունքի են արժանացել ադրբեջանական սեւբերետավորների կողմից Ստեփանակերտում: Օդանավակայանում նրանք ականատես են եղել քաոսային տեսարանների, որոնց ընթացքում նրանց ուղեկիցներից հինգը ձերբակալվել են առանց պատճառաբանության: Օդանավակայանում հայ ուղեւորները պարբերաբար անպատվության ու ծեծի են ենթարկվում, իսկ երիտասարդ կանանց ստիպում են մերկանալ զինվորների առաջ:

Իր կողքին ունենալով Սախարովի այրուն՝ քաղաքացիական իրավունքների գծով հանրածանոթ ակտիվիստ Ելենա Բոններին, լեդի Քոկսն ասաց, որ եթե դեպքերն այսպես շարունակվեն, Բրիտանիան պետք չէ մասնակցի առաջիկա աշնանը Մոսկվայում տեղի ունենալիք մարդու իրավունքների հարցերին նվիրված խորհրդաժողովին:

Իր եզրակացության մեջ պատվիրակությունը ժխտեց խորհրդային իշխանությունների կողմից հայտարարված այն պնդումները, թե հայկական համայնքների դեմ ռազմական գործողությունների միակ նպատակն է անձնագրերի ստուգումը եւ զենքերի առգրավումը, եւ թե գյուղերից բնակչության մեկնումը կամավոր հիմունքներով է կատարվում:

*«Փաստերը ցույց են տալիս, որ բռնագաղթերը բռնի պարտադրվում են: Այդ ընթացքում պատահում են կյանքի, ունեցվածքի կորուստներ եւ ֆիզիկական վնասներ»*, ասաց լեդի Քոկսը՝ ընթերցելով համատեղ հայտարարությունը:

*Բրյուս ՔԼԱՐՔ*

*Մոսկվա, 18 հուլիս*